

## ՎԵՐԱՆԱՅՎԵԼ ԵՆ ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ նոյեմբերի 22-ին կայացած նիստում քննարկվել է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման մասին հարցը:

Քննարկելով վերը նշված հարցը՝ հանձնաժողովը որոշել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագինը սահմանել 191,414 դրամ/խմ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Ընդունված որոշումն ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից:

Որոշման մանրամասներին կարելի է ծանոթանալ հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ [www.psrc.am](http://www.psrc.am):

*ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողով*